1517

Ա. ԲԵՐԳԵՐ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՑԻ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԱՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1937

9(3B)
Բ-55

9002 375 3
MAY 2011

Հ. Խ. Ս. Հ. ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
№ 23 ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 23

PH
35 618

Ա. ԲԵՐԳԵՐ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՑԻ

(Ոժանդակ նյութեր հեռակայողներին)

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵԵՐԵՎԱՆ
1937

04.03.2013

1577

Խմբագիր Ս. ԴԱԲՐԻԵԼՅԱՆ
Թարգմ. ՆԻԿ. ՏԵՐ-ՄԱՆՎԵԼՅԱՆ
Սրբագրիչ՝ ԴԱՐ. ՀԱԿՈԲՅԱՆ

Գլավլիտ կ—8233
Հրատարակ. 14
Պատվեր 23
Տիրաժ 1000

Հանրապետական գրադարան
Գոր. Տիգրանի
2007-Դրամ
Ռ. Ա. Մաստարա
Ծանոթագրության մեջ

3215-84

Հանձնված է արտադրության 1 ապրիլի 1937 թ.
Ստորագրված է տպելու 5 ապրիլի 1937 թ.

Ուսուցիչների վերակավորման ինստիտուտի տպարան,
Երևան, Մարքսի փողոց 17

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՑԻ

1.

Ալեքսանդր Մակեդոնացու պատկերը, վորպես պատմական մեծ անձնավորության պատկեր, խորապես մեխվել է յերկրիս շատ և շատ ժողովուրդների հիշողության մեջ։ Մակեդոնական հռչակավոր զորավարը բազմաթիվ անգամ պատկերացված է պատմական և գեղարվեստական գրականության մեջ. նրա մասին յեղած պատմվածքները բավականաչափ տեղ են գրավել և այժմ ել շարունակում են գրավել Յեվրոպայի, Ասիայի և նույնիսկ Աֆրիկայի ժողովրդական մասսաների ստեղծագործության մեջ։

Վիրն է Ալեքսանդր Մակեդոնացու, վորպես պատմական գործչի և զորավարի, այդ ահագին ժողովրդականության պատճառը, մի ժողովրդականություն, վոր շարունակվում է յերկու հազարամյակ։

Այդ պատճառը նշել է դեռևս Մարքսը, ասելով. «Հունաստանի ներքին բարձրագույն ծաղկումը կապված է Պերիկլեսի դարաշրջանի հետ, իսկ արտաքին բարձրագույն ծաղկումը՝ Ալեքսանդրի դարաշրջանի հետ»։

Գերմանացի բուրժուական խոշոր պատմաբան, «ուժեղ անձնավորության» գաղափարախոս Դրոյզենը չափազանց իդեալականացնում է Ալեքսանդր Մակեդոնացուն և նրա գործունեությունը, այդ գործունեությունը համարելով նոր դարաշրջանի «հելլենականության» յերևան գալու պատճառ։

Մեր խնդիրն այն է, վոր հասկանանք Ալեքսանդր Մակեդոնացու անձնավորությունն ու գործունեությունը Հունաստանի և Առաջավոր Արևելքի յերկրների սոցիալական-տնտեսական հարաբերությունների մեջ տեղի ունեցած այն փոփոխությունների կապակցությամբ, վորոնք ել պայմանավորել են նոր դարաշրջանի յերևան գալը հին աշխարհի պատմական զարգացման մեջ։

Հին Մակեդոնիան մի լեռնոտ յերկիր է, վոր հյուսիս-արևմուտքից հարում է Եգեյան ծովին,—Թերմեյան ծովածոցին, ինչպես կոչվում եր նա հնում,—և սահմանակից է հարավ արևմուտքից Թեսալիային, իսկ հյուսիս-արևելքից՝ Թրակիական-Իլլիրիական ցեղերին։ Մակեդոնիայի լեռները ու հովիտները լիակատար հնարավորություն եյին տալիս բնակչությանը (վորն ազգակից եր հույներին) լայնորեն պարապելու անասնապահությամբ և հողագործությամբ։ Այն ժամանակ (մեր թվականից հինգ դար առաջ) Մակեդոնիայի բնակիչները դեռևս պահպանել եյին կյանքի հին, նահապետական կենսաձևը, վոր շատ կողմերով հիշեցնում եր Հոմերոսի ժամանակները։ Առևտուրը, քաղաքային կյանքը և ստրկատիրությունը Մակեդոնիայում շատ թույլ եյին զարգացած։ Այդ պատճառով էլ նա մնացած Հունաստանի համեմատությամբ հանդիսանում եր հետամնաց յերկիր։

Մակեդոնական ցեղերի խումբը խոշոր և այն դարաշրջանի համար ուժեղ պետություն դարձնելու պայքարը, վոր սկսվել եր մեր թվականից հինգ դար առաջ, վերջացել եր Ալեքսանդրի հոր՝ Փիլիպպոս 2-ի ժամանակ։ Փիլիպպոս 2-ը (360—336 թ. թ. մինչև մեր թվականը) ստեղծեց հին ցեղական անկանոն բանակի փոխարեն միասնական կենտրոնացրած մի բանակ և մտցրեց նրա մեջ հունական ռազմական տեխնիկայի բոլոր նվաճումները։ Այսպիսով առաջ յեկավ ռազմական կազմի նոր, մակեդոնական տեխնիկան—նշանավոր ֆալանգաները՝ զեղակազմ հետևակ միավորները, վորոնցից յուրաքանչյուրի մեջ կար մոտ 11 հազար մարդ, զինված նոր տեսակի զենքով, սարիսներով (մինչև 6 մետր յերկարություն ունեցող ահագին նիզակներով)։ Մակեդոնական զորքի մեջ էլ ավելի կարևոր դեր է խաղացել բազմաթիվ և հիանալի զինված հեծելազորը։ Մակեդոնացիներն ի բնե հեծյալներ եյին. այդ վերաբերում է մանավանդ նրանց ունևոր խավերին և ավագանուն։ Մակեդոնիայում ստեղծվել եր դեռևս վոչ մի տեղ գոյություն չունեցած ծանրազեն մարտիկների հեծյալ կազմ, վորը մեծ գերազանցություն եր տալիս մակեդոնական հեծելազորին հին աշխարհի մյուս յերկրների զորքերի համեմատությամբ*)։

*) Հին Մակեդոնիայի ռազմական տեխնիկայի մասին տես Ֆ. Ենգելսի «Բանակ» խմբագրով հոդվածը։ Ցերկերի ժողովածու հատ. 11-րդ, 2-րդ մասը։

Բոլոր այդ բարեփոխությունների հետևանքով Փիլիպպոս 2-րդը տեր դարձավ ցամաքային ռազմական մեծ ուժերի (նավատորմ նա ունեցավ իր թագավորության վերջում) և այդ ուժերը դարձան Հունաստանի քաղաքական կյանքի վճռող գործոնները։

Փիլիպպոս 2-րդը հետզհետե յենթարկում է իր քաղաքական կոնտրոլին Թեսալիան, իսկ միջին Հունաստանը, վոր այն ժամանակվա քաղաքական և կուլտուրական կյանքի կենտրոնն եր, կանգնում է իր անկախությունը կորցնելու սպառնալիքի առաջ։ Շուտով Փիլիպպոսը գրավում է Եգեյան ծովի հյուսիսային ափերին գտնվող յերկրները, դրանց հետ միասին նաև հունական, քաղկեդոնական և Թրակիական ծովափնյա առևտրական քաղաքները, վորոնք կարևորագույն հենակայաններ եյին հանդիսանում հունական, գլխավորապես Աթենքի ծովային առևտրի համար։ Այդ քաղաքների գրավումը Փիլիպպոս 2-րդի կողմից առաջ բերեց մի յերկարատև պատերազմ, վորի մեջ նրա դեմ դուրս եր յեկել Միջին Հունաստանի պոլիսների մի խումբ՝ Աթենքի գլխավորությամբ։

Այդ պայքարի եությունը, ինչպես նաև Ալեքսանդր Մակեդոնացու գործունեությունը ճշգրտորեն հասկանալու համար անհրաժեշտ է լուսաբանել հին ժամանակի յերկու ուրիշ «հասարակական» ուժերի՝ Հունաստանի և Պարսկաստանի սոցիալական-տնտեսական դրությունը։

Հունաստանը մեր թվականից առաջ 4-րդ դարի յերկրորդ կիսում վերապրում եր խոր սոցիալական-տնտեսական ճգնաժամ։ Պոլիսներում կազմվել եյին ստրկատիրական հասարակության ապադասակարգայնացած տարրերի աչքի ընկնող մասսաներ, չքավորներ, վորոնք հաճախ վոչինչ չունեյին, բացի ազատ քաղաքացու կոչումից։ Պակասել եր ազատ հողագործ բնակչությունը, վորին դուրս եր մղել ստրկական աշխատանք գործադրող զարգացած խոշոր հողատիրությունը։ Ուժեղորեն աճել եր առևտրական-վաշխառուական կապիտալը ստրկատիրական հիմունքով։ Պոլիսներում կազմվել եր դրամատիրական (պլուտոկրատիա) վերնախավ, վորի շահերը հատու կերպով տարբերվում եյին ապադասակարգայնացած մասսայի շահերից։ Դրա հետևանքով հունա-

կան քաղաքներում ծավալվեց դասակարգային սուր պայքար, որը հաճախ ընդունում էր հեղափոխական բռնկումների բնույթ։

Այսպիսով Հունաստանում անտիկ ստրկատիրական հասարակությունը հասավ անկման, որի արտահայտությունն էր հունական հասարակության քաղաքական կազմակերպության թուլացումը։ Արդեն գոյություն չուներ Աթենքի ծովային պետությունը, որը գրավել էր Միջերկրական ծովի արևելյան մասի հունական պոլիսների ընդարձակ յերկիրը։ Սպարտայի ռազմական ուժն անհայտացել էր, չկային այլևս Հունաստանում քիչ թե շատ կայուն քաղաքական միավորություններ։

Սակայն ապադասակարգայնացած քաղաքացիական մասսան տիրում էր ռազմական բարձր տեխնիկային, որը նա ծախում էր նրան, ով ավելի յեր վճարում։ Հունական վարձու զորքերը ծառայում եյին և՛ պարսիկ թագավորին, և՛ նրա դեմ ապստամբած կուսակալներին, և՛ Միջերկրական ծովի լայնածավալ յերկրի ամեն տեսակի այլ իշխողներին։

Հունական ռազմիկների հետ միասին ասիական յերկրներն եյին մտնում նաև հունական ապրանքները։ Ավելի և ավելի յեր զարգանում առևտուրը Փոքր Ասիայի ներքին մասի, Ասորիքի, Միջագետքի, Իրանի և նույնիսկ Միջին Ասիայի հետ։ Առևտրական ճանապարհները տարածվում եյին հեռու արևելք, պարսկական պետության խորքը։

Պարսկական պետությունն այդ ժամանակ քաղաքական քայքայման պատկերն էր ներկայացնում։ Աքեմենիդների թագավորական իշխանությունը հենվում էր սոցիալական-տնտեսական տեսակետից հետամնաց պարսկական ցեղերի և, ամենից առաջ, նրանց տոհմական ազնվականության վրա։ Հենվում էր նա նշանավոր չափով նաև հունական վարձկանների վրա։ Պարսկական լծի ծանրության տակ տառապող բազմաթիվ ստրկացված ժողովուրդները ձգտում եյին ազատվել այդ իշխանությունից։ Յեգիպտոսում, Միջագետքում, Փոքր Ասիայում, որոնք այդ ժամանակ գրավված եյին պարսիկների կողմից, տեղի եյին ունենում հուզումներ, որոնք առանձին բռնկումներով հայտարարում եյին իրենց մասին։ Բայց հենց պարսկական ազնվականության մեջն էլ կատարվում էր քայքայման պրոցեսը։ Այդ մասին վկայում են պալատական սպանությունները ու հեղաշրջումները, որոնք բավական հաճախ եյին տեղի ունենում այդ շրջանում։ Այսպիսով 4-րդ դարի յերկրորդ կեսի պարսկական պետությունը պետական կազմակերպության կայունության տեսակետից ներկայացնում էր ինքնին «կավե վոտներ ունեցող հսկային»։

Պարսկական թագավորների կողոպտած անագին հարստությունները չափազանց գրավում եյին հույներին և բորբոքում եյին նրանց յերևակայությունը։ Ստեղծվում է մի ամբողջ թեորիա, որն առաջ է քաշում բոլոր հույների քաղաքական միացման անհրաժեշտությունը՝ միահամուռ կերպով արշավելու Պարսկաստանի վրա՝ նրա առասպելական հարստությունները զավթելու և «բարբարոսներին» հունական տիրապետությանը հպատակեցնելու նպատակով։ Դրա մեջ տեսնում եյին վոչ միայն ստրկատիրական հարաբերությունների ճգնաժամից դուրս գալու յելք, այլև Աթենքի պետության անցյալ փայլի վերածնության՝ չտեսնված չափերով։ Դա «պանհելլենական գաղափարի» ուղղություններից մեկն է, որը հունական աշխարհի ապագա քաղաքական վերածնման կենտրոն էր դարձնում Աթենքը և արտացոլում էր դեմոկրատական մասսաների իդեոլոգիան, որոնք յերազում եյին հարստանալ և վերականգնել ամբողջությամբ ստրկատիրական դեմոկրատիայի քաղաքական հարաբերությունները։

Մի ուրիշ ուղղություն յելնում էր պլուտոկրատական վերնախավից, որը ձգտում էր հենակետ գտնել ապադասակարգայնացած մասսայի յելույթների դեմ մակեդոնական թագավորի նոր ձևակերպված ուժեղ ռազմական իշխանության մեջ, որը պետք է զավթեր Պարսկաստանը և նրա հարստությունները՝ զլուխ կանգնած հույն-մակեդոնական զորքերին, միացնելով իր իշխանության ներքո ամբողջ Հունաստանը։

Ընդհակառակն, առաջին ուղղությունը տեսնում էր մակեդոնական թագավորի մեջ դեպի ինքը թշնամական, հակադեմոկրատական ուժ, և նրա առաջնորդները կազմակերպում եյին յերանդուն դիմադրություն մակեդոնական թագավորի վոտընձգությունների դեմ։ Դեմոկրատիայի առաջ քաշած առաջնորդների մեջ ամենից նշանավորն էր հռետոր Դեմոսթե-

նեսը։ Հակամակեդոնական խմբակցությանն էր հարում նաև Սպարտան՝ Պելոպոնեսի հնացած պետությունների մեծամասնության հետ միասին։

Փիլիպպոս 2-րդի համարյա քսանամյա պայքարի շրջանում տեղի ունեցած անցքերից Հունաստանի հակամակեդոնական խմբակցության դեմ հարկավոր է նշել Խերոնի մոտ կատարված նշանավոր ճակատամարտը (338 թվին մեր թվականից առաջ), վորտեղ Փիլիպպոս 2-րդը հաղթեց հակամակեդոնական կոալիցիային։

Սակայն այդ հաղթությունն Աթենքը և Մակեդոնիային թշնամի հնացած Հունաստանը չդարձրեց նվաճած յերկրներ։ Փիլիպպոսն ստիպված էր հետագայում հարգել Աթենքի կարծիքը, քանի վոր ծովը խոշոր չափով շարունակում էր հնալ Աթենքի իշխանության ներքո։ Փիլիպպոսը և մանավանդ նրա հռչակավոր վորդին և հաջորդը՝ Ալեքսանդրը կարողացան գլուխ բերել Արևելքի նվաճումը, միայն զգալի չափով հենվելով Բալկանյան թերակղզու բոլոր ժողովուրդների ռազմական միջոցների և քաղաքական տրադիցիաների վրա։

2.

356 թվին, նախքան մեր թվականը, Փիլիպպոս 2-րդի կինը՝ Եպիրոսի իշխանուհի Վոլիմպիան ծնեց Ալեքսանդր վորդուն։

Դեռևս մանուկ հասակում նա իր խոսքերով և արարքներով հայտաբերել էր իր արտասովոր անձնավորության գծերը։ Ալեքսանդրն ստացել է իր ժամանակի համար փայլուն դաստիարակություն։ Նրա կրթությունը բոլորել է հին ժամանակի մեծագույն գիտնականներից մեկը—Արիստոտելը, վորը յերիտասարդ իշխանի հետ, վորպես նրա դաստիարակը, ապրել է մոտ յերեք տարի՝ նրանց համար հատուկ շինված, շքեղ պուրակով շրջապատված պալատում։ Բայց Ալեքսանդրը մոտ չէր Արիստոտելի հետ, թեև շատ բան է սովորել իր մեծ ուսուցչից։ Պատանեկության հասակում Ալեքսանդրը հափշտակվում էր Հոմերոսի պոեմների դյուցազների հերոսությամբ և մեծ արհամարհանքով էր վերաբերվում ավագ սերդնի զգաստ ու իրենց հավասարակշռությունը պահպանող մարդկանց։

Ալեքսանդրն անհամեմատ ավելի մոտ էր մորը, քան հորը, վորի հետ նա մի քանի անգամ ունեցել է այնպիսի խոշոր ընդհարումներ, վոր ժամանակին պատող լուրերը նրան մասնակից էին համարում իր հոր սպանության գործում։ Հայտնի է, վոր Ալեքսանդրը յենթակա յեր բուռն զայրույթի բռնկումների, վոր յերբեմն փոխվում էր հիստերիայի։ Պատմաբանները նշել են նաև նրա սնոտի կրոնամոլությունը, սերը դեպի պոզան և դերասանական-ությունը։ Հռչակավոր զորավարի ֆիզիկական արտաքինը չէր համապատասխանում նրա փառքին։ Ալեքսանդրը թույլ կազմվածքի տեր, հիվանդոտ մարդ էր, իսկ նրա առանց այդ էլ թույլ առողջությունը սիստեմատիկորեն քայքայվում էր անզուսպ շվայտանքներով, վորոնք առանձնապես հաճախ էին լինում, յերբ նա Արևելքումն էր գտնվում։

Դեռևս իր հոր կենդանության ժամանակ Ալեքսանդրը կարողացել էր հայտաբերել իր ռազմական և վարչական ձիրքերը։ Նա ճնշել էր թրակիական ցեղերի ապստամբությունը և լինելով հեծելազորի հրամանատարը, վճռական դեր էր կատարել Խերոնի մոտ յեղած ճակատամարտում։

Փիլիպպոս 2-րդի մահն ազդանշան դարձավ Հունաստանում հակամակեդոնական շարժման ծավալմանը, մանավանդ վոր միաժամանակ ապստամբել էին թրակիական ցեղերը։ Դեմոսթենեսը հաջողությամբ կոչ էր անում պատերազմելու Մակեդոնիայի դեմ։ Շարժման կենտրոն դարձել էին Թեբեն և Բեոտիան։

Բայց Ալեքսանդրը կատարելով բացառիկ արագ չվերթ՝ ապստամբների համար անսպասելի կերպով յերևաց Բեոտիայում և ջարդեց նրանց զորքը։ Թեբեն վերցվեց և ավերվեց։ Նրանց բնակչության նշանակալից մասը ծախվեց վորպես գերիներ։ Մեծ քանակությամբ մարդիկ կոտորվեցին քաղաքը վերցնելու ժամանակ։ Սակայն Աթենքի վերաբերմամբ Ալեքսանդրը ցույց տվեց հարգալից զսպվածություն. նա Աթենքի հետ կապեց պայման, ըստ վորի վոչ միայն պահպանվում էին գոյություն ունեցող հարաբերությունները, այլև Աթենքի տրամադրության տակ էր անցնում Բեոտիային սահմանակից կարևոր Վորոպի ամրությունը։ Հակամակեդոնական շարժման առաջնորդների անվտանգությունն ապահովվում էր լիովին։ Այսպիսով Ալեքսանդրն ընդգծում է իր համերաշխությունը դեմոկրատական Հունաստանի հետ։

334 թվի գարնանն Ալեքսանդրի հրամանով ծերունի զորավար Փիլիպպոս Պարմենիոնն անցնում է Հելլեսպոնտոսի միջով։ Դրանով սկսվում է Պարսկաստանի դեմ մղվող կամպանիան։ Պատերազմը Պարսկաստանի դեմ արդեն բոլորովին նախապատրաստված եր Փիլիպպոսի կողմից և միայն նրա մահվան պատճառով չեր սկսվել ավելի վաղ։

Ալեքսանդրն սկսել է իր արշավանքները մոտավորապես 40 հազար զորքով, իսկ պարսկական թագավորը հակադրել եր նրան ավելի քան հարյուրհազարանոց մի բանակ։

Առաջավոր Արևելքի ամենահարուստ յերկրների խորքն արշավելու հեռանկարը, հարստանալու անսահման հնարավորությունները,—այդ բոլորն Ալեքսանդրի յելույթը դարձրել եր ժողովրդական՝ հունական քաղաքներում։ Հունաստանը քիչ մարտիկներ չի ուղարկել նրա բանակը։ Բայց Ալեքսանդրի գլխավոր ուժերն այսուամենայնիվ կազմում եյին մակեդոնական մարտիկները։

Շնորհիվ այն հանգամանքի, որ թագավորի որիենտացիան ստրկատիրական դեմոկրատիայի ոգին եր, նույնիսկ Դեմոսթենեսը վերջ տվեց իր հակամակեդոնական յելույթներին։

Ալեքսանդրը, որպես բոլոր հույների ռազմական առաջնորդ, իր արշավանքը սարքել եր որպես տրոյական պատերազմի կրկնություն. նրա նավատորմը ափ եր հասել նույն տեղում, որտեղ, որպես թե, հնագույն ժամանակում կանգ եյին առել Ագամեմնոնի նավերը։ Տրոյայի բլուրների վրա կատարվում է հանդիսավոր զոհաբերություն։

Այնինչ պարսից թագավոր Դարեհ 3-րդ Կոդոմանոսի զորքերը կենտրոնացել եյին Ալեքսանդրի ափհանման տեղից վոչ հեռու՝ Հրանիկոս փոքրիկ գետակի մոտ, նրա բարձր ափում։ Պարմենիոնը խորհուրդ է տալիս Ալեքսանդրին սպասել հարմար ժամանակի, ցույց տալով նրա զորքի քանակական գերազանցությունը և պարսիկների դիրքի առավելությունը։ Բայց Ալեքսանդրը պատասխանում է նրան. «Մի թե ինձ պետք է արդեն մի փոքրիկ գետակ, յերբ յես արդեն անցել եմ Հելլեսպոնտոսը։ Այդ վայել չէ վոչ մակեդոնացիների արժանապատվությանը, և վոչ էլ այն արհամարհանքին, որ յես ունեմ վտանգների հանդեպ. պարսիկներն էլ, յես կարծում եմ, կբարձրացնեն

իրենց գլուխները և կկարծեն, թե կարող են իրենց ուժերը չափել մակեդոնացիների հետ, վորովհետև անմիջապես գաղափար չեն ունենա այն մասին, թե ինչից պետք է վախենան նրանք*»։ Դրանով նա մի անգամ ընդ միշտ մշակեց Պարսկաստանի հետ պատերազմելու այն յեղանակը, վորը միակ հնարավորն եր տվյալ պայմաններում, գրոհի ուժեղ թափը և հակառակորդի կենդանի ուժի վոչնչացումը, վոր հնարավոր եր կատարել շնորհիվ մակեդոնական զորքի վորակի գերազանցության։ Բացի դրանից, Ալեքսանդրը գիտեր, վոր նրան ուշադրությամբ հետևում եր ամբողջ Հունաստանը և յուրաքանչյուր հապաղում կամ անհաջողություն հեշտությամբ կարող եյին թիկունքում ծանր բարդություններ առաջացնել։

Մակեդոնական հեծելազորի բուռն գրոհը պարսկական դիրքերի կենտրոնի վրա յերիտասարդ թագավորի առաջնորդությամբ՝ արագ կերպով վճռում է ճակատամարտը. կենտրոնը ջախջախված եր, չդիմեց նաև հունական վարձկանների ընդդիմադրությունը, վորոնք գտնվում եյին պարսկական ճակատի յերկրորդ շարքում։

Պարսկական զորքն սկսեց խառնիխուռն փախչել, իր մի նշանավոր մասով վոչնչացավ և գերի բռնվեց։ Գերի հույներին Ալեքսանդրը հայտարարեց հայրենիքի դավաճաններ և ստրուկներ դարձրեց։ Բացառություն եր արվել թեբեցիների համար. Ալեքսանդրը նրանց ազատ թողեց, ցանկանալով այսպիսով փարատել այն ծանր տպավորությունը, վոր ստեղծվել եր Հունաստանում՝ Թեբեյի կործանումից հետո։ Հունաստանի հասցեյին արած այդ ժեստը նա լրացրեց մի ուրիշ ժեստով. ավար վերցրած պարսկական սպառազինման յերեսուն լավագույն կոմպլեկտ Ալեքսանդրն ուղարկեց Աթենք, որպես նվեր՝ քաղաքի հովանավոր աստվածուհուն հետևյալ մակագրությամբ. «Ալեքսանդրը Փիլիպպոսի որդին և հույները, բացի լակեդեմոնացիներից**), Ասիայի բարբարոսներից»։

---

*) Արրիան, «Ալեքսանդրի արշավանքները», գիրք 1, 13-րդ գլուխ։

**) Լակեդեմոնի բնակիչները չեյին մասնակցում Ալեքսանդրի արշավանքին։ Նրանց մի մասը նույնիսկ կռվում եր նրա դեմ՝ պարսկական բանակի շարքերում։

3.

334—333 թվի ձմեռը պարսից թագավոր Դարեհ 3-րդը վճռում է հարված հասցնել Ալեքսանդրի բանակին՝ նրա ամենախոցելի տեղից։ Այդ նպատակով նա փորձում է կազմակերպել ծովային արշավանք Հունաստանի դեմ, ոգտագործելով պարսկական նավատորմի գերազանցությունն Եգեյան ծովում և հույս դնելով Հունաստանի հակամակեդոնական խմբավորումների վրա։ Դրանով իրագործվում էր նաև պարսից ծառայության մեջ գտնվող հունական աչքի ընկնող ռազմագետ Մեմնոնի պլանը, որը խորհուրդ էր տալիս Դարեհին հրապուրել Ալեքսանդրին և նրա զորքը՝ Ասիայի խորքը, կտրելով նրան ռազմական բազայից, գրավել Հունաստանը և այսպիսով մակեդոնական զորքը դնել անելանելի դրության մեջ։ Մեմնոնը ճշտորեն էր գնահատում մակեդոնական ուժերի վորակական գերազանցությունը և առաջարկում էր մի այնպիսի ռազմագիտություն, որը հիմնված էր բոլոր քաղաքական և ռազմական մոմենտների զգաստ հաշվառման վրա։

Մեմնոնն սկսում է իրագործել իր պլանը. նա գրավում է Ֆիոս կղզին, պաշարում է Միտիլենը Լեսբոսի վրա, կազմակերպում է ընդդիմադրություն մակեդոնացիների դեմ Փոքր Ասիայի ծովափնյա քաղաքներում—Յեփեսոսում, Միլեթում—ամեն տեղ իշխանության կոչելով ոլիգարխներին։ Բայց շուտով Ալեքսանդրի այդ վտանգավոր հակառակորդը մեռնում է։ Սակայն Եգեյան ծովի գրավման պլանը շարունակում է իրագործվել Մեմնոնի հաջորդների կողմից։

Ալեքսանդրին հաջողվում է համեմատաբար հեշտությամբ վերջ տալ այդ վտանգին։ Նրա յերկու ծովային հրամանատարները—Ֆեգելոխոսը և Պրոթեոսը—աչքի ընկնող յերիտասարդ հրամանատար Կրատերոսի ընդհանուր ղեկավարությամբ սկսում են մի շարք ծովային յեռանդուն գործողություններ, որոնց արդյունքը լինում է այն, որ զգալի չափով հունական նավերից բաղկացած պարսկական նավատորմն անցնում է Ալեքսանդրի կողմը։ Աթենքի և մնացած Հունաստանի վերաբերմամբ ցույց տված քաղաքականությունը տալիս է իր արդյունքները։ Բայց Դարեհի նավատորմի մնացած և ուժեղագույն մասը, որը բաղկացած էր փյունիկեցիների նավերից, դեռևս սպառնում էր կտրել մակեդոնական զորքը Հունաստանից։

Իր կողմից Ալեքսանդրը Հրանիկոսի մոտ տեղի ունեցած ճակատամարտից հետո սկսեց գրավել Եգեյան ծովի փոքրասիական ափերը, որ բռնված էր մնացած հունական աշխարհի հետ սերտորեն կապված հունական պոլիսների անընդհատ շղթայով։ Այստեղ մակեդոնական զորքը հաղթեց Մեմնոնի կողմից նշանակված և ղեկավարվող Միլեթի, Յեփեսոսի և Հալիկարնասի ոլիգարխներին։ Ալեքսանդրի խնդիրը հեշտացնում էին այդ քաղաքների դեմոկրատական խմբավորումների համակրությունը և մակեդոնական բանակի տեխնիկական հրաշալի հագեցումը։ Մակեդոնական բանակը հանդիսանում էր «կլասիկ» Հունաստանի ռազմական տեխնիկայի զարգացման նոր աստիճանն ու հանրագումարը։ Հենց այդ է մեկն այն գլխավոր պատճառներից, որոնք պայմանավորում էին Ալեքսանդր Մակեդոնացու բանակի շեշտակի հաջողությունները։ Կռվի ժամանակ հետևակ զորքի գործողություններին նախորդում էր «հրետանու» նախապատրաստությունը. պատեր քանդող բարդ ու մեծածավալ մեքենաներն ավերում էին քաղաքի պատերը, իսկ ավելի բարդ նետող մեքենաները ոմբակոծում էին քաղաքը քարե ծանր արկերով։

333 թվի գարնան մոտ Փոքր Ասիայի ծովափնյա պոլիսներն Ալեքսանդրի իշխանության ներքո էին և նա շարժվում է փոքր Ասիայի խորքերը՝ այդ շրջանում իր գործողությունների կենտրոն դարձնելով Գորդիոնես քաղաքը։ Վորի մեջ, ըստ ավանդության, տեղի է ունեցել մի եպիզոդ, որից սկիզբ է առել նշանավոր գորդյան հանգույցի առածը։ Այստեղ, բերդի մեջ, շատ հնուց կար մի սայլակառք, որի կաշվե լծասարքն այնպես էր խճճվել, որ անհնարին էր ծայրերը գտնել։ Գոյություն ուներ ավանդություն, թե ով որ կարողանար քանդել այդ հանգույցը, նա կդառնար Ասիայի իշխողը։ Ալեքսանդրը թրով կտրում է այդ «գորդյան հանգույցը»*)։

Գորդիոնեսից Ալեքսանդրն առաջ է շարժում իր զորքերը դեպի Փոքր Ասիայի հարավ-արևելյան ափը, Կիլիկիա, որի մի-

*) Պլուտարքոս, «Ալեքսանդր Մակեդոնացու կենսագրությունը»։

ջով ընկած եյին ճանապարհներ դեպի պարսկական պետության յերկու կարևորագույն մարզերը—Յեգիպտոս և Միջագետք։ Այդ մարզերից յերկուսումն ել տեղի ուներ խռովություն պարսկական տիրապետության դեմ։ Դարեհ Յ-րդը ձգտում եր հենց այդտեղ կանգնեցնել Ալեքսանդրի արշավանքը, վորովհետև Կիլիկիայի ծովափին շատ մոտիկ եյին գտնվում փյունիկիական Սիդոն և Տիրոս քաղաքները, վորոնք պարսկական նավատորմի հիմնական բազաներն եյին կազմում։ Այստեղ, Փոքր Ասիայի ափի հարավ-արևելյան անկյունում, Իսսա ավանի մոտ տեղի ունեցավ յերկրորդ ճակատամարտը մակեդոնական և պարսկական բանակների մեջ։ Ալեքսանդրը կրկին կիրառեց հեծելազորի շեշտակի գրոհի տակտիկան պարսկական դիրքերի կենտրոնի վրա, վորը հնարավորություն տվեց նրան լիովին ոգտագործելու մակեդոնական հեծելազորի բարոյական և տեխնիկական առավելությունները, և Դարեհը նորից փախավ, այս անգամ այնքան գլուխը կորցրած, վոր հաղթողի ձեռքում թողեց իր կնոջը՝ «Արևելքի ամենագեղեցիկ կնոջը», մորը, քույրերին և աղջիկներին։ Ալեքսանդրը ցույց տվեց նրանց վերաբերմամբ բարեկամական ուշադրություն և ապահովեց նրանց կատարյալ անվտանգությունը, շեշտելով դրանով, վոր ինքը նպատակ չունի լինելու Պարսկաստանի և նրա սոցիալական-քաղաքական կենցաղի նվաճող-կործանողը, այլ՝ պարսիկ թագավորների որինական ժառանգը։

Այդ միևնույն դիտավորությունն է արտահայտում նա լիակատար պարզությամբ Դարեհ Յ-րդի հետ ունեցած իր գրագրության մեջ, վոր սկսվել եր Իսսայի մոտ կատարված ճակատամարտից հետո։ Դարեհը նամակում խնդրել եր Ալեքսանդրից վորպես «արքայից արքա» վերադարձնել իրեն կնոջը և ընտանիքը և վերջ տալ ռազմական գործողություններին, վորոնք իր (Դարեհի) կողմից չեն յեղել սկսված։ Ալեքսանդրը պատասխանում է նրան մեղադրելով այն բանի մեջ, վոր Պարսկաստանն անընդհատ փորձեր է կատարում խլելու Հունաստանը, պաշտպանում է հակամակեդոնական շարժումը և վերջացնում է նամակն այս խոսքերով. «Այժմ յես ամբողջ Ասիայի տերն եմ և սպասում եմ քո այցելության...Յեթե դու կգաս ինձ մոտ, այն ժամանակ խնդրիր և՛ մորդ մասին, և՛ կնոջդ մասին, և՛ զավակներիդ մասին,—ինչի մասին ցանկանում ես, ամեն ինչ կատանաս... ուղարկելով ինձ մոտ, դու հիշիր, վոր ուղարկում ես Ասիայի թագավորի մոտ և չհամարձակվես քեզ ինձ հավասար համարել»*)

4.

Սակայն Պարսկաստանը նվաճելու համար Ալեքսանդրին նախապես անհրաժեշտ եր հաստատապես ամրացնել իր դրությունը Հունաստանում, իսկ հետևապես նաև Միջերկրական ծովի վրա։ Անհրաժեշտ եր յենթարկել իր լիակատար կոնտրոլին փյունիկական քաղաքները, վորտեղ կենտրոնացած եր առևտրի նշանավոր մասը Միջերկրական ծովի արևելյան մասում և վորոնք այսպիսով հանդիսանում եյին հունական առևտրականների մրցակիցներ, վորոնց պաշտպանում եր Ալեքսանդրը։ Արրիանն այսպես է հաղորդում Ալեքսանդրի ճառը, վոր նա ասել է Տիրոսը պաշարելուց առաջ. «Զինակից բարեկամներ և ընկերներ։ Մենք չենք կարող վստահությամբ արշավել Յեգիպտոսի վրա, քանի դեռ պարսիկները ծովի տերերն են... Յեթե մենք առնենք Տիրոսը, այն ժամանակ կդառնանք Փյունիկեյի տերը և փյունիկական նավատորմը, վոր պարսկական ծովային ուժերի ամենամեծ և լավագույն մասն է կազմում, մերը կլինի»։ Այս պատճառով ել Ալեքսանդրի ուղին վոչ թե ուղղակի Բաբելաստան եր ուղղված՝ Առաջավոր Ասիայի այդ գանձատունն ու շտեմարանը և հունական նվաճողների յերազանքների առարկան, այլ Միջերկրական ծովի արևելյան ափով դեպի հարավ։

Ամբողջ 332 թիվն անցավ փյունիկական քաղաքները նվաճելով. ինն ամիս տևեց անառիկ Տիրոսի փյունիկական այդ կարևորագույն կենտրոնի պաշարումը, վորը գտնվում եր մի փոքրիկ ժայռոտ կղզյակի վրա, մոտավորապես մի կիլոմետր հեռու ծովի ափից։ Տիրոսի պաշարումը հնարավոր եր միմիայն հույն-մակեդոնական նավատորմի կատարյալ գերակշռման և մեծագույն կառուցումներով պաշարելու դեպքում։ Արրիանը, Կվինտոսը, Կուրցիոսը, Դիոդորոսը և Պլուտարքոսը,—մեր գլխավոր սկզբնաղբյուրները,

*) Արրիան, «Ալեքսանդրի արշավանքները», գիրք 2-րդ, գլ. 14-րդ։

վորոնք պատմում են մակեդոնական նվաճումների պատմության մասին,—պատմում են միաժամանակ Ալեքսանդր Մակեդոնացու պաշարման հսկայական կառուցումների մասին։ Մակեդոնական բանակի ինժեներները շինել էին հսկայական ամբարտակ ծովափի և Տիրոսի մեջ։ Այդ ամբարտակի վրայով գլորելով տանում էին պաշարողական աշտարակներ, վորոնց բոլոր հարկերում կային պատերն ավերող և ծանր հրետագնդեր նետող մեքենաներ։ Պաշարվածները պատասխանում էին այրելով փայտյա մեքենաները և աշտարակները, բայց վերջի վերջո պատերը կործանվեցին, և Տիրոսը յենթարկվեց կատարյալ վոչնչացման։ Նրա բնակչությունը կամ վոչնչացվեց, կամ ծախվեց գերության, կամ տեղափոխվեց ուրիշ տեղեր։ Հին Տիրոսը կամ ավելի ճիշտ՝ նրա պատերն ստացան նոր բնակիչներ՝ հանձինս հունական կոլոնիստների։ Այսպիսով Հունաստանն սկսեց ստանալ փոխհատուցում իր ոգնության փոխարեն, վոր նա ցույց եր տվել մակեդոնացի նվաճողին։

Կատաղի դիմադրություն ցույց տվեց Ալեքսանդրին նաև հարավում ընկած փյունիկական Գազա քաղաքը, վորը վերցվեց և կործանվեց յերեք ամսվա պաշարումից հետո։ Քիչ հետո Ալեքսանդրը հրամայում է վերաշինել նախկին Գազան, բայց այդ իսկապես նոր քաղաք եր՝ դարձյալ հույն կոլոնիստներով բնակեցրած։

Գրավելով Միջերկրական ծովի արևելյան, փյունիկյան ափը, Ալեքսանդրն առանց ընդդիմադրության նվաճում է նաև Յեգիպտոսը։ Տեղական բնակչությունը—ինչպես ժողովրդական լայն մասսաները, նույնպես և իշխող շրջանները—վողջունեցին մակեդոնական զորքերի գալուստը։ Ժողովրդական մասսաներն անիծում էին պարսիկ իշխանությունների ապորինի տուրքերը, իսկ հասարակության բարձր խավերը փափագում էին «ազատություն», այսինքն փափագում էին զավթել իշխանությունն իրենց ձեռքը։ Հենց վոր Ալեքսանդրը յերևաց Յեգիպտոսի մայրաքաղաքում—Մեմֆիսում—նա զոհաբերություններ կատարեց Ամոնին և յեգիպտացիների մյուս գլխավոր աստվածներին։ Դրանով Ալեքսանդրը մի տեսակ հայտարարեց իրեն Յեգիպտոսի որինական տեր և ամենից առաջ ապահովեց իրեն իշխող շրջանների և քրմության պաշտպանությամբ։

Ալեքսանդրը, սակայն, այդ կրոնական հոգսերի հետևից ամենևին չեր մոռանում աշխարհիկ գործերը։ Նա տեսնում եր, վոր այնպիսի մի հարուստ յերկիր, ինչպիսին Յեգիպտոսն է, չունի լավ շինված նավահանգիստ, ինչպես նաև չունի առհասարակ իր հիմնական առևտրական կենտրոնը։ Մեծ նշանակություն տալով այդ խնդրին, նա վճռում է ստեղծել այդպիսի կենտրոն։ Նա անձամբ ընտրում է ապագա քաղաքի տեղը, անձամբ նշում է նրա սահմանները և հրամայում է յեռանդով տանել շինարարությունը։ Շուտով հայտնվում են ուղիղ անկյուններով տրամախաչված փողոցներ, շինվում են հասարակական և առևտրական շինություններ և այն ժամանակվա տեխնիկայի վերջին խոսքի համաձայն կառուցվում է նավահանգիստը։ Այդ քաղաքը, վոր կոչվեց Ալեքսանդրիա, ստանում է ինքնավարության իրավունք և սկսում է արագորեն լցվել գլխավորապես հույն առևտրական-արհեստավոր բնակչությամբ։ Ալեքսանդրիան մինչև այժմ էլ գտնվում է իր հին տեղում և հանդիսանում է Միջերկրական ծովում խոշոր-ագույն նավահանգիստ։ Ալեքսանդրի մահից հետո, հելլենականության դարաշրջանում Ալեքսանդրիան դառնում է համաշխարհային կենտրոն։

Յեգիպտոսն ստանում է նոր, ռազմական-վարչական կազմակերպություն, վորը, սակայն, համարյա ձեռք չի տալիս մանր շրջանների հին սիստեմին, վորոնցից կազմված եր ամբողջ յերկիրը։ Յերկրի կառավարչության գլուխ եր նշանակված յեգիպտացի, բայց նրա հետ միասին կար կենտրոնական վարչության առանձին պետ՝ Ալեքսանդրի մերձավորներից։ Կառավարության առանձին ճյուղերի գլուխ եյին կանգնած հույներ կամ մակեդոնացիներ։

5.

Ընդունելով բազմաթիվ դեսպանություններ Հունաստանից և խաղերով ու զերասանների յելույթներով տոնելով արշավանքի առաջին մասի ավարտը՝ Ալեքսանդրը 331 թվի գարնանը (մինչև մեր թվականը) առաջ շարժվեց նշանավոր չափով մեծացած զորքով դեպի Միջագետք։ Դարեհը կարողացել եր այդ ժամանակ հավաքել իր ժամանակի համար [illegible] վորը յերկու

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм.ССР
им. А. Мясникян
Ц. Սոսի

յերեք անգամ իր թվով գերազանցում էր Ալեքսանդրի զորքին։ Խրատված դառն փորձերից՝ Դարեհը վճռում է իր բազայից շատ չհեռանալ և ոգտագործել իր դրության բոլոր ոգտավետ կողմերը. նա առաջուց ընտրել էր իր համար հարմար պատերազմի վայր՝ Տիգրիս գետի մյուս կողմում, հին Նինվեյից վոչ հեռու, և այդտեղ սպասում էր Ալեքսանդրի յերևալուն։ Ալեքսանդրը հանդիստ կերպով անցնելով Տիգրիսը՝ նրա վերին մասում առաջ է շարժվում գետի հոսանքով ներքև դեպի Բաբելոն և մինչև մեր թվականի 331 թվի հոկտեմբերի 10-ին ընդհարվում է Դարեհի զորքերի հետ Գավգամելա ավանի մոտ։ Տեղի յե ունենում համառ ճակատամարտ, վորի մեջ Ալեքսանդրը ծավալում է իր ամբողջ ռազմական տաղանդը։ Նա անձամբ ղեկավարում է լարված ճակատարարտը, հարձակվելով իր հեծյալ գվարդիայով ամենավտանգավոր տեղերի վրա։ Հետևանքը պարսկական բանակի կատարյալ ջախջախումն էր։ Դարեհը հազիվ փախավ իր հյուսիսային մայրաքաղաքը՝ Եքբաթան, իսկ Ալեքսանդրն արդեն վոչ այնքան նվաճում էր Միջագետքը, վորքան ընդունում էր յերկիրը իր հպատակության ներքո, առանց վորևե ընդդիմադրության։ Բաբելոնը բացեց նրա առաջ իր դռները և ուղարկեց նրան ընդառաջ հանդիսավոր պատգամավորություններ բնակչության բոլոր խմբերից, իսկ Բաբելոնի կուսակալ Մազին անձնատուր յեղավ նրան առանց այլևայլության։ Ալեքսանդրը թողեց նրան իր պաշտոնի մեջ։ Բաղաքի կուսակալ Սուզ-Աբուլիտը նույնպես առանց այլևայլության անձնատուր է լինում առաջուց ուղարկած մակեդոնական հրամանատար Ֆիլոքսենեսին և նույնպես թողնվում է իր պաշտոնի մեջ։ Յերբ 331 թվին Միջագետքին տիրելուց հետո Ալեքսանդրն իմանում է, վոր սպարտացի թագավոր Ագիսեսը կազմակերպել է Պելեպոնեսի մեծ մասի յելույթը մակեդոնական փոխարքա Անտիպատրոսի դեմ, նա սաստիկ անհանգստանում է այդ լուրից և ուղարկում է Անտիպատրոսին մեծ ուժեր՝ ճնշելու համար այդ ապստամբությունը։ Ագիսեսի յելույթը, վոր ըստ յերևույթին պաշտպանում էր ազնվականհողատիրական շրջանների շահերը, համեմատաբար թեթևությամբ ճնշվում է. բնորոշ է, վոր նույնիսկ Դեմոսթենեսը յելնում է ընդդեմ այն ձայների, վորոնք լսվում էին Աթենքի ազդային ժողովում և առաջարկում էին պատերազմել Մակեդոնիայի դեմ։

Սուզիանից Ալեքսանդրը շարժվում է Դարեհի հետևից դեպի բուն Պարսկաստանի խորքը, Եքբաթան, պարսից թագավորների գլխավոր աթոռանիստ Պերսեպոլիսի վրայով։

Ճանապարհն անցնում էր Ուկսիների (այժմյան Խուզիստանի) դժվարամատչելի լեռնոտ յերկրով, վորը մինչև անվանապես յենթակա յեր պարսից պետությանը։ Ալեքսանդրն ավերում է նրա լեռնային ամրությունները և ստիպում է հպատակվել իր իշխանությանը։ Պերսեպոլիսի առասպելական պալատը, վորն իր ճարտարապետության մեջ միացրել էր ասորա-բաբելոնական դեղարվեստական տարրերը հունականի հետ, այրում են և ավերակներ դարձնում։ Ալեքսանդրի ձեռքն են ընկնում անհագին հարստություններ. միմիայն վոսկի խլված էր մոտավորապես 400 միլիոն ռուբլու արժողությամբ՝ վոսկու հաշվով։

Դարեհը ճանկելով մեծամեծ դանձեր, փախչում է Եքբաթանից հյուսիս-արևելք, ըստ յերևույթին դեպի Բակտրիա, Սոդդիան և Պարթևացոց Յերկիրը, այն դավառները, վորոնք գտնվում են ներկայիս խորհրդային Միջին Ասիայի սահմաններում, Թուրքմենստանի, Ուզբեկստանի և Տաջիկստանի հանրապետությունների հողերում։ Այստեղ ռազմասեր ցեղերի մեջ, վորոնք մոտ էին պարսիկներին իրենց լեզվով, Դարեհը և նրան ուղեկցող ազնվական Բեսս և Նաբարզան պարսիկները հույս ունեին կազմակերպել նոր դիմադրություն Ալեքսանդրի բանակին։

Ալեքսանդրն ուղարկում է Պարմենիոնին՝ հպատակեցնելու Դիրկանիան, իր մանկության բարեկամ Կլիտոսին ուղարկում է Պարթևացոց Յերկիրը, իսկ ինքն շտապում է հալածել Դարեհին։ Հալածումը չափազանց լարված էր։ Ալեքսանդրն իր զորքի հետ ստիպված էր հաղթահարել շատ մեծ տարածություն։

Դրությունը բարդանում էր նաև նրանով, վոր այդ ժամանակ Դարեհի և նրա ուղեկիցների շուրջը խմբվել էին պարսկական բանակի լավագույն ուժերը։

Այդ ժամանակ Բեսսը մտածել էր սպանել Դարեհին, վորպեսզի ինքը, վորպես պարսից թագավոր, տիրե Միջին Ասիային և պատերազմ մղե Ալեքսանդրի դեմ։ Ալեքսանդրին այդ բանը հաղորդել էին բազմաթիվ զինվորներ, վորոնք փախել էին թշնամու զորքից, և նա, ցանկանալով ամեն կերպ պարսից թագավորին հաղթող լինել՝ ձգտում էր խանգարել այդ սպանու-

թյունը։ Կատաղի կերպով հալածելով Դարեհին՝ Ալեքսանդրը հայտնվում է Միջին Ասիայի սահմանների մոտ։ Այստեղ Ալեքսանդրը դանում է Դարեհի տակավին չսառած դիակը և ծածկում է այն իր ծիրանի պատմուճանով, շեշտելով դրանով, որ հաղթված պարսից թագավորի մարմինը պետք է նվիրական լինի իր հպատակների համար։

6.

Այդ մոմենտից սկսվում են մակեդոնական զորքերի մի շարք ծանր արշավանքներն Ալեքսանդրի գլխավորությամբ Միջին Ասիայում և Հնդկաստանին հարող յերկրներում։ Այդ արշավանքները, որ տևեցին ավելի քան յերեք տարի (330—326 թ.թ. մեր թվականից առաջ), նպատակ ունեցին ոչ միայն ռազմականորեն զավթելու յերկիրը, այլև հիմնավորապես տիրելու նրան։ Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակի Միջին Ասիան ավելի քիչ չափով եր անապատների յերկիր, քան ավելի ուշ ժամանակներում։ Արալյան ծովի մակարդակը 60 մետր ավելի բարձր եր ներկայ մակարդակից և նրանից մինչև Կասպից ծովն անցնում եր այդ ծովերը միացնող մի ջրանցք։ Շատ տեղերում արոտավայրերով հարուստ տափաստանային տարածությունները հանդում եյին այնտեղ, որտեղ հետագայում կազմվել եյին մեռյալ ավազուտներ։

Գիրկանիայում՝ Միջին Ասիայի շեմքին, Ալեքսանդրը և նրա զինակիցներն ստիպված եյին հաղթահարել մի շարք ռազմական լեռնական ժողովուրդների—մարդերի, թափուրների և այլն համառ դիմադրությունը, որոնց մոտ թաքնվել եյին Դարեհի բանակի մնացորդները։ Սակայն այստեղ Ալեքսանդրն ընդհարվեց անբավականության առաջին նշանների հետ իր զորքերի մեջ, որոնց մի մասը չեր ցանկանում առաջ շարժվել։ Ալեքսանդրն ազդեց իր մարդկանց վրա յերկու միջոցով. մի կողմից՝ նա բաշխեց մարտիկներին առատ նվերներ, մյուս կողմից՝ ջոկեց անհնազանդ տարրերին և ուղարկեց նրանց հայրենիք*)։

Ալեքսանդր Մակեդոնացու Միջին Ասիա մտնելու ժամանակից մակեդոնական զորքի մեջ տեղի ունեցան իրադարձություններ, որոնք լրջորեն սպառնում եյին նրա դրությանը։ Պարզվեց, որ կա հուզմունք Ալեքսանդրին ամենից ավելի մոտիկ հրամանատարների շրջանում, որոնք հայտնի չափով արտացոլում եյին մակեդոնական մարտիկների տրամադրությունը։ Հուզմունքն առաջ եր յեկել Ալեքսանդրի գործելակերպից, նրա ձգտումից՝ մոտեցնել իրեն պարսկական ազնվականությունը՝ նշանակել պատասխանատու պաշտոններում պարսիկներին։ Ալեքսանդրը չափազանց կտրուկ կերպով արձագանքեց այդ անբավականությանը։ Յերբ նա դեռևս գտնվում եր Դրանգիանոսում և Արախոզիայում, նրան ցույց են տալիս իր յերիտասարդ և ամենամոտ հրամանատարներից մեկին—Պարմենիոնի որդի Փիլոտասին։ Մի կարճ քննությունից հետո Ալեքսանդրը խորհրդի յե հավաքում իր գվարդիայի հրամանատարներին և Փիլոտասին դատապարտում են մահվան պատժի։ Ալեքսանդրի գաղտնի հրամանով Միդիայում (Մարաստան) սպանվում է նաև Պարմենիոնը, որ խոշորագույն մակեդոնական զորավար եր և Ալեքսանդրի հոր մոտիկ բարեկամը։ Ծերունի հրամանատարի սպանությունը արտունջ առաջացրեց հասակավոր մարտիկների մեջ, որոնք մակեդոնական զորքի հիմքն եյին կազմում։ Ալեքսանդրը գործում եր ծայր աստիճան վճռականությամբ և յեռանդով։ Ոկսուս (Ամու-Դարյա) գետն անցնելուց առաջ նա վռնդեց բանակից մի շարք փորձված հին մարտիկների և ուղարկեց նրանց հայրենիք, Ալեքսանդրի լարված դրության և ջղայնության մասին այդ շրջանում վկայում է մի զորբերդական դեպք, որը տեղի ունեցավ ավելի ուշ (328 թ.) Մարաքանդում. յերեկոյան խրախճանքի ժամանակ նա սեփական ձեռքով սպանում է իր մանկության բարեկամ և մերձավոր Կլիտոսին, որը մի քանի անգամ փրկել եր նրա կյանքը, և այդ միմիայն այն պատճառով, որ Կլիտոսը կտրուկ կերպով կշտամբում եր թագավորի գործելու յեղանակը։ Սակայն, ինչպես պատմում են հին պատմագիրները, այդ սպանությունից հետո Ալեքսանդրն ամբողջ ժամանակ տանջվում եր զղջալուց,

Կարգ սահմանելով իր զորքերի մեջ՝ Ալեքսանդրը շարժվում է դեպի հարավ-արևելք, արիական ժողովրդի մարդը, որի կուսակալ Սատիբարզանն անձնատուր է լինում նրա մարդի գլխավոր կենտրոնում՝ Արտակոանում։

*) Դիոդորոս, հատ. 17-րդ, գլ. 74-րդ։

Շուտով Ալեքսանդրը լուր է ստանում, որ Բեսսը Բակտրիայում հայտարարել է իրեն Արտաշես թագավոր և մեծ զորք է կազմակերպում։ Ալեքսանդրն անհապաղ շարժվում է դեպի հյուսիս՝ Բակտրիա։ 330 թվի վերջին ամիսներն Ալեքսանդրն անց է կացնում Բակտրիայում՝ ապստամբությունների դեմ արշավանքներ վարելով և միաժամանակ զբաղվում է այդ յերկրից հարավ ընկած՝ իր արդեն նվաճած մարզերը կարգի գցելով։ Այդ նպատակով նա հիմնում է մի քանի նոր քաղաքներ, որոնք հետագայում խոշոր դեր են խաղացել Միջին Ասիայի պատմության մեջ։ Դրանցից մենք հիշենք արիական Ալեքսանդրիան կամ այժմյան Հերատը և Արախոզիական Ալեքսանդրիան կամ Ղանդահարը (այժմյան Աղվանստանում)։ Համարելով Հինդուկուշի լեռնաշղթան Կովկասի շարունակությունը՝ Ալեքսանդրը հիմնում է ուղիղ Հնդկաստանի սահմանի մոտ, Ավղանստանի ժամյան մայրաքաղաքի՝ Քաբուլի տեղը Ալեքսանդրիա քաղաքը Կովկասում։

Կատաղի կռվից հետո Ալեքսանդրին հաջողվում է ջարդել պարսկական զորքերի մնացորդներին, որոնք կռվում էին Բեսսի հրամանատարությամբ և գրավել ամբողջ Բակտրիան։

Զախջախված Բեսսն անցնում է Ոկսուս գետը և փախչում դեպի Յակսարտ (այժմյան Սիր-Դարյան) գետի ուղղությամբ, որտեղ նա հույս ուներ թաքնվել հալածանքից բաղմաթիվ ռազմասեր թափառակյաց ցեղերի մոտ, որոնց Ալեքսանդրը և նրա հետ նաև հնագույն պատմագիրներն ու աշխարհագիրները սխալմամբ անվանում են սկյութացիներ։

Ալեքսանդրն իր զորքերով անցնում է Ոկսուս գետի վրայից այժմյան Քելիֆի մոտ, ըստ որում նավակներ և շինանյութեր չլինելու պատճառով այդ խոր և ջրառատ գետն անցնելու միջոց են ծառայում ողով լցրած կաշվե տիկերները։

Հաջողությամբ անցնելով գետը՝ Ալեքսանդրը շարժվում է դեպի հյուսիս, յերկրի գլխավոր կենտրոնը—Մարաքանդը (այժմյան Սամարղանդը)։ Ճանապարհին գալիս են նրա մոտ Բեսսի զինակից Սպիտամենի կողմից դեսպաններ և առաջարկում են մատնել Բեսսին։ Ալեքսանդրն ուղարկում է առաջ իր մերձավոր հրամանատարներից մեկին՝ Պտղոմեոսին, որին իսկապես հաջողվում է բռնել Բեսսին. Ալեքսանդրը պատժում է նրան որպես խռովարարի, պարսկական թագավորների սովորության համաձայն

կտրում են նրա քիթն ու ականջները և ուղարկում են նրան Բակտրիա, որտեղ քիչ հետո պարսկական դահի այդ անբախտ թեկնածուն սպանվում է։

Վերջացնելով իր հաշիվները Բեսսի հետ՝ Ալեքսանդրը մրցնում է Մարաքանդ և թողնելով նրա ամրոցում կայազոր, լայն հովով անցնում է առաջ դեպի արևելք, Յակսարտ գետը, որի ձախ ափին ընկած էին խիտ բնակեցված և հարուստ հողեր։ Այստեղ կային բազմաթիվ քաղաքներ, որոնց մեջ կային բավականին խոշորները։ Յակսարտի աջ ափին ապրում էին մասագետների ռազմասեր թափառակյաց ցեղերը, որոնց ապստամբություններից ցանկանում եր ազատվել իրեն Ալեքսանդրը։

Հենց որ մակեդոնական զորքը տեղավորվում է կայազորներով Սոգդիանի քաղաքներում, ամբողջ յերկրում բռնկում է ապստամբություն, որը, հավանորեն, նախապատրաստել եր Սպիտամենը, որովհետև այդ ժամանակում նա մեծ ուժերով հարձակվում է Մարաքանդի վրա և վոչնչացնում է այնտեղի մակեդոնական կայազորը։ Ստեղծվել եր չափազանց վտանգավոր դրություն։ Բայց մակեդոնական բանակի հրաշալի կազմակերպությունը և տեխնիկական գերազանցությունը կատարում են իրենց գործը։ Ալեքսանդրը հանդուգն յեռանդով վարում է խիստ պաշարողական պատերազմ՝ ապստամբած քաղաքների դեմ։ Յերկու որվա մեջ նա վերցնում հինգ մանր քաղաքներ։ Գլխավոր քաղաքը—«Կիրոսի քաղաքը»—պահանջում է մեծ լարվածություն պաշարողների կողմից, ըստ որում գրոհներից մեկի ժամանակ ինքը՝ Ալեքսանդրը բավական ծանր վիրավորում է։

Ճնշելով ապստամբությունը՝ Ալեքսանդրը հրամայում է հիմնել քաղաք իր բանակի տեղում։ Բանակատեղին շրջապատում են մոտ 11 կիլոմետր յերկարություն ունեցող (60 ստադիա) պատով, ներսում շինում են տներ, հասարակական և պետական շենքեր—այդ ամենը 17—20 որվա ընթացքում։ Նորաշեն քաղաքում բնակեցնում են զինվորական կոլոնիստներին, գլխավորապես հույներին։ Այդ քաղաքն ստացավ «Ալեքսանդրիա Եսխատե» անունը, որ նշանակում է «Ծայրային Ալեքսանդրիա»—այժմյան Խոջենտը (որը ներկայումս վերակոչված է Լենինաբադ) և գտնվում է Ցերգանյան հովտի մուտքի մոտ։

328—327 թվի ձմեռն անցավ մեծ կազմակերպչական աշխատանքի մեջ՝ Պարսկաստանը կառավարելու վերաբերմամբ, զորքերի տեղափոխության և կոմպլեկտացման մեջ։ Մակեդոնիայից և Հունաստանից նոր զորքեր եկին դալիս։

Այդ ձմեռը նշանավոր դարձավ այն տրադիկական ընդհարումով, որ տեղի ունեցավ հելլենական սարկատիրական դեմոկրատիայի և արևելյան թագավորների բռնապետական իշխանության մեջ, որոնց ներկայացուցիչն ավելի հատու կերպով դառնում էր Ալեքսանդրը։ Ալեքսանդրի ընդունելությունների ժամանակ սովորություն մտցվեց ընկնել յերեսի վրա և չոքեչոք սողալ նրա առաջ, որով արտահայտվում էր նրա աստվածացումը։ Այդ սովորությունը չկատարող պարսիկներին սաստիկ պատժում եյին, մինչդեռ այդ կարգը չպահպանող մակեդոնացիների և հույների արարքին նայում եյին «մատների արանքով»։ Ալեքսանդրին ուղեկցող հայանի հունական պատմագիր և փիլիսոփա Կալլիսթենեսը, որ նրան մոտիկ մարդ էր, սկսեց դատապարտել թագավորի բռնակալական հակումները։ Կալլիսթենեսը թագավորի հրամանով շղթայակապ է արվում և, ինչպես ասում եյին, դաղտնի սպանվում է։

Ամառը հասնելու հետ միասին արշավանքներ կազմակերպվեցին տիրելու համար դիմադրության վերջին պատվարներին՝ Սոգդիանում։ Գլխավոր ամրություններից մեկն էր մանր իշխան Ոքսիարդի աթոռանիստը, որը գտնվում էր անառիկ ժայռի վրա։ Անձնատուր լինելու պահանջին Ոքսիարդը ծաղրով պատասխանում է. «Թող Ալեքսանդրն առաջ թեավոր ձիեր ձեռք բերե»։

Սակայն Աթոռանիստ քաղաքը շուտով առնվում է։ Ալեքսանդրի ձեռքը գերի յե ընկնում Ոքսիարդի աղջիկը, հռչակավոր «արևելքի վարդը»՝ Ռոքսանան, որի հետ Ալեքսանդրը շուտով ամուսնանում է։ Այդ փաստը մեծ տպավորություն է գործում միջինասիական ժողովուրդների տոհմիկ ավագանու ներկայացուցիչների վրա, որոնք մտածում եյին, որ այդ ամուսնությամբ մակեդոնական թագավորը մտել է երենց շարքերը։ Ալեքսանդրի կողմից այդ ամուսնությունը, անկասկած, մտածված դիվանագիտական մի խաղ էր, որի շնորհիվ նա նշանավոր չափով ապահովում էր իր համար տոհմիկ ավագանու ոգնությունը, որ առանձնապես հարկավոր էր նրան Հնդկաստանի համար նախապատրաստվող արշավանքի մեջ։ Նրա անսովոր շքեղ ամուսնությունը Ռոքսանայի հետ քաղաքական մի ցույց էր։

Հնդկաստանի արշավանքն զգալի չափով նախորոշված էր այն առևտրական և քաղաքական սերտ կապերով, որոնք գոյություն ունեցին հարավից Միջին Ասիային հարող լեռնային յերկրների և Հնդկաստանի մեջ։ Այդ արշավանքը հեշտանում էր շնորհիվ հնդկական առանձին ցեղերի առաջնորդների և ժողովուրդների իրար դեմ ունեցած կատաղի կռվի։ Այսպես, որինակ, այժմյան Ավղանստանի յերկիրը գրավելու ժամանակ Ալեքսանդրը հանդիպում է հնդկական մանր իշխան Սիսիկոտտին, որը ճանաչում է Ալեքսանդրի մոտ և տեղեկություններ է հաղորդում նրան այդ վեճերի մասին։ Մի ուրիշ հնդկական ռաջա, Տաքսիլը, դիմում է նրան և ոգնություն խնդրում այն կռվի մեջ, որ նա ուներ Փենջաբի Փոր թագավորի հետ։ Իսկ Հնդկաստանի առասպելական հարստությունների լուրը սաստիկ հրապուրում էր հույն-մակեդոնական զորքին և հրում էր նրան պատերազմելու։

326 թվի գարնանն Ալեքսանդրը թողնելով բավականաչափ ուժեր Միջին Ասիայում, յերկրորդ անգամ անցնում է Պարապոնիսադը (Հինդուկուշը) և հայտնվում է Ինդոսի հովտում, որտեղ նրան դիմավորում է Տաքսիլը։ Ալեքսանդրը թողնում է իր կայազորը ռաջայի մայրաքաղաքում, իսկ ինքն անցնում է Ինդոսի ձախ ափը և Գիդասպի ափերում լիովին հաղթում է Փոր թագավորին և գերի առնում նրան։

Այդ հաղթությունից հետո Ալեքսանդրն սկսում է ամրանալ Փենջաբում և այնտեղ հիմնում է յերկու քաղաք—Նիսեա և Բուցեֆալ (այժմյան Ջալալպուրը) գաղութները։ Վերջին գաղութի անունը տրվում է ի պատիվ պատերազմում սպանված՝ Ալեքսանդրի սիրելի ռազմական Բուցեֆալ ձիու։ Այստեղից Ալեքսանդրը շարժվում է Ինդոսի ձախ վտակներով դեպի արևելք, պատերազմելով տիրում է ամրացրած կենտրոններին, հպատակեցնելով իրեն մի շարք ցեղեր։ Նա հույս ուներ հասնել մինչև Գանգես գետը և նրա ուղղությամբ՝ մինչև Ովկիանոս, որը նրա տեսակետից Ասիայի ծայրագույն սահմանն էր։ Բայց նրան չհաջողվեց իրագործել այդ պլանը, որովհետև զորքերը հրաժարվեցին

արշավանքի յելնելու։ Հույն-մակեդոնական զինվորների վաղուց ամբարված դժգոհությունը դուրս պոռթկեց։ Ջնայելով Ալեքսանդրի հորդորներին, զորքը չեր ցանկանում առաջ շարժվել և նույնիսկ այնպիսի հրամանատարներ, ինչպես Յենն եր, խորհուրդ եյին տալիս թագավորին վերադառնալ։ Ալեքսանդրը հայտարարում է վերադառնալու մասին։ Վերադարձն Ալեքսանդրի դժվարագույն արշավանքներից մեկն եր, որի ընթացքում զորքի մի մասը լողում եր գետերով, իսկ մյուս մասը գնում եր ցամաքային ճանապարհով՝ Երիթրեյական ծովի ափով դեպի Պարսկաստան։ Ինդոսով լողալու հետ միաժամանակ տեղի եյին ունենում մի շարք կռիվներ և հիմնվում են ամրություններ։

Ամենամեծ աշխատանք յերկիրը տիրելու և ամրացնելու մեջ կատարվում է Ինդոսի դելտայում։ Այնտեղ շինվում և սաստիկ ամրացնում են Պատալի հին կենտրոնը, որտեղ կառուցում են նավահանգիստ, նավաշինարաններ, զինանոց։ Քաղաքը դարձնում են ռազմական և առևտրական բազա։ Իր ծովապետ Նեարքոսին Ալեքսանդրը հանձնարարում է նավատորմը տանել ովկիանոսով Պարսից ծովածոցը և պարզել անմիջական ծովային հարաբերությունների հնարավորությունը Միջագետքի և Հնդկաստանի մեջ։ Ինքը՝ Ալեքսանդրը սոսկալի զրկանքների պայմաններում տանում է զորքը Հեդրոզիայի (այժմյան Բելուջիստանը) միջով և ապա ովկիանոսի ափով դեպի Միջագետք։

Ալեքսանդրը և նրա ծովապետ Նեարքոսը կատարում են իրենց խնդիրը և հաջողությամբ հասնում են իրենց նպատակին։ Վերադառնալով Հնդկաստանից Բաբելաստան՝ Ալեքսանդրը յառանդով զբաղվում է պետությունը կառավարելու գործով։

Գլխատում և պարգևատրում է փոխարքաներին, կազմում է արշավանքների հանրագումարը, հայտարարում է զորքին, որ ինքը կվճարի արշավանքին մասնակցողների բոլորի փոխարեն։ Այսպիսով ծախսվում է 20 հազար տաղանդ (մոտ 30 միլիոն ռուբլի)։ Շուտով Ալեքսանդրը նորից «զտումն» է կատարում իր բանակի շարքերում, ընտրում է մոտ 10 հազար հույներ և մակեդոնացիներ, որոնց հրամայում է ճանապարհվել հայրենիք։ Դրա հետ միաժամանակ նա կարգադրում է հավաքագրել Պարսկաստանում 30 հազար յերիտասարդ տղերք, մտցնել բանակի կազմի մեջ վարժեցնելու համար և անվանում է նրանց «եպիգոններ», այսինքն՝ «հետնորդներ»։

Այդ կարգադրություններն առաջացնում են համարյա բացարձակ խռովություն ամբողջ մակեդոնական զորքի մեջ։ Տիգրիսի ափին գտնվող Ոփիս քաղաքում զորքերի բոլոր մակեդոնական մասերը հայտարարում են, որ չեն ցանկանում հնազանդվել պարսիկներին և նույնպես գնում են հայրենիք։ Ալեքսանդրն արտասանում է տաք ճառ, որի մեջ հայտարարում է, որ նրանք կարող են հեռանալ և ձգել իրենց զորավարին ոտար ժողովրդի մեջ և որ այսուհետև նա պարսիկների հրամանատարն է լինելու։ Բայց մակեդոնական զինվորները խորհեցին և չցանկացան հրաժարվել իրենց հրամանատարից, որն այնքան հաջողություններ և նյութական բարիքներ է տվել նրանց։ Կայանում է հաշտություն, որը տոնվում է փառահեղ խնճույքով և խաղերով։ 10 հազար վետերաններ շարժվում են դեպի Մակեդոնիա և Հունաստան՝ Կրատերոսի հրամանատարության ներքո, ծանրաբեռնված մեծ ավարով, իսկ այստեղից Ալեքսանդրի տեղակալ Անտիպատրոսն ստիպված եր թարմ ուժեր ուղարկելու։

Ցանկանալով ստեղծել խառը մակեդոնական-պարսկական ազնվականություն, Ալեքսանդրը սարքում է մի շարք ամուսնություններ մակեդոնական բանակի հրամանատարների և ազնվատոհմ պարսկուհիների մեջ։ Ինքը՝ թագավորը և նրա ամենամոտիկ բարեկամ Գեթեստիոնեսն ամուսնանում են Դարեհ Յ-րդի յերկու աղջիկների հետ, մյուսները՝ իշխանուհիների կամ ազնիվ ծագումն ունեցող կանանց հետ։

Իր կյանքի վերջին ամիսներում Ալեքսանդրը շատ մեծ ուշադրություն է հատկացնում Տիգրիսի և Յեփրատի վրա գետային նավատորմ կազմակերպելուն՝ մի կողմից և մյուս կողմից ել Պարսից ծովածոցում և Կարմիր ծովում ծովային նավատորմ հիմնելուն։ Նա հրավիրում է Բաբելաստան ամենափորձված նավաստիներ Փյունիկեյի և Փոքր Ասիայի ափերից և դնում է նրանց իր ծովապետների հրամանատարության ներքո՝ Նեարքոսի գլխավորությամբ։ Տիգրիսի գետաբերանի մոտ, Պարսից ծովածոցի հյուսիսային ափին շինվում և սարքավորվում է Խարակսես քաղաքն ու նավահանգիստը։ Ալեքսանդր Մակեդոնացու հանկարծական մահը 323 թվին Բաբելոնում ընդհատում է նրա [illegible] գործունեությունը։

ՀՀ Ազգային գրադարան
NL0403329

***

Ալեքսանդր Մակեդոնացու անվան հետ կապված է անտիկ աշխարհի պատմության մեջ նոր փուլի յերևան գալը։ Ստրկատիրական հարաբերությունների խոր ճգնաժամը Հունաստանում առաջադրել եր հունական կոլոնիստների մեջ ձգտում՝ դիմելու դեպի Արևելք, պարսից պետության խորքերը։ Հունաստանը և Պարսկաստանը կարծես սպասում եյին բավականաչափ ուժեղ ցնցման նրա համար, որ սոցիալական-տնտեսական, քաղաքական և կուլտուրական փոխազդեցության պրոցեսն ավելի արագ թափով ընթանա։ Այս տեսակ ցնցում հանդիսացավ մակեդոնական ռազմական պետությունը, որի գլուխ կանգնած եր մի անձնավորություն, որն ուներ հանճարի բոլոր նշանները, որը հաղորդեց այն ժամանակի [պատմական անցքերին իրահատուկ թափ։

238

ԳԻՆԸ 1 Ռ. 20 Կ.

15 МАЯ. 1937

9(38)
Բ-55